ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 07/18.1/231-2022

«…»……**2022թ.**

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
(ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ)
Էլ փոստ՝ foi@foi.am

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր 2022 թվականի հունվարի 11-ի թիվ 348-86 գրությանը՝ ներկայացնում ենք 2021 թվականի ընթացքում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանն ուղղված տեղեկություն ստանալու հարցումների վերաբերյալ պահանջվող վիճակագրությունը.

1. 2021 թվականի ընթացքում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն) ստացել է 181 տեղեկություն ստանալու հարցում, որից 167-ը՝ էլեկտրոնային եղանակով:
2. Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի (e-request) միջոցով Նախարարությունը ստացել է 105 հարցում:

3. և 4. 2021 թվականի ընթացքում սոցիալական ցանցերի միջոցով նախարարությունը տեղեկություն ստանալու հարցում չի ստացել և, հետևաբար, ընդհանուր վիճակագրության մեջ չի ներառել: Տեղեկացնենք, որ սոցիալական էջերը վարում է Նախարարության Հասարակության հետ կապերի բաժինը, հետևաբար վիճակագրությունը հավաքագրվում, դասակարգվում և համակարգվում է նույն բաժնի կողմից: Նախարարության 2 սոցիալական հարթակներով՝ ֆեյսբուք և ինստագրամ, պարբերաբար ստանում ենք հարցեր նախարարության գործունեության տարբեր ուղղությունների վերաբերյալ:

Facebook սոցիալական ցանցով 2021 թվականին ստացվել է 310 նամակ: Նամակները հիմնականում վերաբերել են նախարարության կողմից կազմակերպված դրամաշնորհային ծրագրերին, տեխնոլոգիական ուղղություններով կազմակերպվող դասընթացներին, նախարարությունում առկա թափուր հաստիքներին, աշխատանքի ընդունման կարգին, այլ ոլորտային հարցեր: Ինստագրամ սոցիալական հարթակով ստացվել է 2 նամակ: 1-ինը վերաբերել է տեխնոլոգիական ուղղություններով կազմակերպվող դասընթացներին, 2-րդը՝ աշխատանքի ընդունվելու կարգին:

5. 2021 թվականի ընթացքում Նախարարությանն ուղղված հարցումներից մերժվել են երեքը:
6. Հարցումներից մեկը մերժվել է, քանի որ հայցվող տեղեկությունը ընդգրկված էր ՀՀ կառավարության 1998 թվականի մարտի 13-ի N 173 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկում: Մյուս երկուսը մերժվել են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 3 ենթակետերով սահմանված հիմքերով:
7. Ստորև ներկայացվում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով պահանջվող տեղեկությունների հրապարակման ակտիվ հղումները՝

https://hti.am/main.php?lang=1&page_id=714

Recoverable Signature

X

ԳԵՎՈՐԳ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԳԵՎՈՐԳ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

ՓՈԽԱՐԻՆՈՂ

Գործերի կազմակերպման վարչություն
Կատարող՝ Հ.Մայիլյան 010-590017